,, ՚ի մարմնի , և աւելի քան զտարա-
,, կայութիւն 1200 մղոնից բացական
,, յառաջնորդէն իմմէ և յեպիսկոպո-
,, սէ . և թէ զի՞նչ անցք ընդ իս անց-
,, ցեն՝ Աստուծոյ է գիտելի . . . Սա-
,, կայն հայրախնամ Տեսչութիւնն
,, Աստուծոյ որ անքուն աչօք հսկէ ՚ի
,, վերայ իւրոցն յամենայն ծագս տիե-
,, զերաց՝ ոչ եթող ելիք զիս յառաջի-
,, կայ գործս իմ և ՚ի վշտամբեր պա-
,, տահարս : Ազնիւ և մարդասէր վե-
,, րատեսուչ քաղաքիս , թէպէտ և ՚ի
,, նորաղանդից է , այլ սփոփեաց զիս
,, առատ կարեկցութեամբ և ձեռն-
,, տուութեամբ . և ըստ իմոյս աղա-
,, չանաց ետ ինձ օգնականս յիւրոց
,, զօրականաց արս երիս և չինեցի
,, յանտառի աստ ՚ի մէջ վայրենի բը-
,, նակչաց երկրիս հիւղ մի փոքրիկ ՚ի
,, պատսպարութիւն գիշերոյ : Ար-
,, դարև կեանք տաժանական և դը-
,, ժուարին և բազմավտանգ զոր վա-
,, րեմն յամնոյ հետէ . այլ ես ջանամ
,, յօգուտ վարել զժամանակս , ուսա-
,, նիմ զվայրենեացս լեզու , դիտեմ
,, զսովորութիւնս սոցա , և հարթեմ
,, փոքր ՚ի շատէ զճանապարհս քարո-
,, զութեան առաջի եղբարց զորս ակն
,, ունիմ ընդունել ՚ի մարդասիրու-
,, թենէն Աստուծոյ և ՚ի փութաջան
,, խնամոց եպիսկոպոսին իմոյ : Նա
,, Աստուած որ փրկեաց զիս սքանչե-
,, լապէս յանդնդախոր պտուտիցն Ով-
,, կիանու , տացէ ինձ հաստատութի
,, և զօրութիւն և առողջութիւն .
,, քանզի ես քան զևս պարտական
,, եմ արդ նուիրել զամենայն ինչ զիմ
,, ՚ի փառս նորա և ՚ի փրկութիւն եղ-
,, բարց մերոց եղկելեաց . և երանի
,, թէ ինձ ես վիճակեսցի բոլորա-
,, նուէր ողջակէզ մատչել , որպէս լը-
,, սեմ զի վիճակեալ է ամնովք ինչ
,, յառաջ գեղեցկապէս եպիսկոպո-
,, սին և ամենայն քարոզչաց Նորոյն
,, Կալետոնիոյ՝ կոտորելոց յանխնայ
,, ՚ի խուժադուժ բնակչաց երկրին :
,, Ապաքէն այս ճանապարհ է սերմա-
,, նելոյ զբանն կենաց , և զսոյն արար
,, վարդապետն մեր Քրիստոս , որ հա-
,, լածանօք հանդերձ և չարչարանօք
,, և մահու խաչի քարոզեաց և հաս-
,, տատեաց զեկեղեցի նր . վասն որոյ
,, և գոհանամ և բարեբանեմ զնա զի
,, հաղորդս առնէ և զիս փոքր մի չար-
,, չարանացն իւրոց . և զի թէպէտ և
,, կթոտեալ և անկեալ եմ ՚ի մարմնոյ
,, զօրութէ , բայց ՚ի հոգւոյս եռան-
,, դնէ ոչ ինչ իւիք նուազեալ . և այս
,, նր շնորհ է , և աղօթից հաւատա-
,, ցելոց : Արդարև , Ասեմական Տէր ,
,, մեծ է յոյս իմ յԱստուած , բայց ոչ
,, զանց առնեմ և զմարդկեղէն հնա-
,, րիւք , և յետ Աստուծոյ ՚ի ձեռն-
,, տուութիւն առաջնորդացդ իմոց
,, ապաւինեալ եմ . որոյ վասն և գրե-
,, ցի առ եպիսկոպոսն իմ թուղթ եր-
,, կարապատում զի յղեսցէ առ իս օգ-
,, նութիւն և պէտս և ընկերակիցս ,,
և այլն : Նորանէ մեզի որ հիմակուան
ատենս ալ չեն պակսիր այսպիսի առա-
քելաջան մշակք , խոստովանողք և
մարտիրոսք ՚ի փառս և ՚ի պայծառու-
թի սուրբ եկեղեցւոյ : Նմահական
և անմոռանալի գովեստ և պարծանք
նաև Փրոփականտայի աստուածա-
պահ վարժարանին որ այսպիսի աշա-
կերտներ ընծայեր է միշտ ու կ՚ընծայէ
Քրիստոսի սուրբ հաւատքը ծաղկե-
ցընող ու փառաւորող :

Հ . Հ . Թ

Ի՞նչ տարբերութիւն ունի վայրենի մարդը բարբարոս կամ խուժադուժ մարդէն . — Ա՛ն՝ որ վայրենին անտառները կը բնակի , բարբարոսը քաղաքները . վայրենին իր անգթութիւնը կ՚ընէ սովորութեամբ , բարբարոսը ախորժելով . վայրենւոյն տըգիտութիւնն է շատ անգամ իր անգթութեանը պատճառ , բարբարոսին՝ չարութիւնը : Շատ աւելի դիւրաւ կ՚արդարանայ ան վայրենին որ մարդու միս կ՚ուտէ՝ քան թէ ան անգութ բարբարոսը որ եղբօրը անունը կը ծամծըմէ ու անոր հոգւոյն և մարմնոյն մեծամեծ վնասներ կը հասցընէ :